



# ՏԵՂԵԿԱՆՔ

2022թ. սեպտեմբերի 25-ի  
ՏԻՄ ընտրությունների  
դիտորդական առաքելություն



### *Ղիտորդական առաքելության մասին*

2022թ. սեպտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության 18 համայնքներում տեղի են ունեցել տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրություններ, որից՝ 17 համայնքում տեղի են ունեցել համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու, մեկում՝ մեծամասնական ընտրակարգով համայնքի ավագանու և ղեկավարի ընտրություններ:

«Ականատես» ղիտորդական առաքելության կողմից երկարաժամկետ և կարճաժամկետ ղիտորդություն է իրականացվել 10 համայնքներում, որոնք ներառում են 180 բնակավայր:

N	Մարզ	Համայնք	Ընտրողների թիվ
1	Արագածոտն	Թալին	26,775
2	Գեղարքունիք	Ճամբարակ	10,833
3	Լոռի	Գյուլագարակ	6,208
4	Լոռի	Տաշիր	18,382
5	Լոռի	Ալավերդի	30,547
6	Կոտայք	Չարենցավան	26,870
7	Շիրակ	Անի	15,901
8	Սյունիք	Քաջարան	6,099
9	Սյունիք	Սիսիան	22,942
10	Տավուշ	Բերդ	22,485

Նախընտրական ժամանակահատվածի գործընթացները ղիտարկելու նպատակով «Ականատեսը» ներգրավել է 9 երկարաժամկետ ղիտորդ, որոնք ուսումնասիրել են ընտրությունների վարչարարությունը, քաղաքական ուժերի

գործունեությունը, նախընտրական քարոզչությունը, վարչական ռեսուրսի հնարավոր չարաշահումը և ընդհանուր մթնոլորտը: Դիտորդները տեղերում աշխատել են ընտրական հանձնաժողովների, թեկնածուների, ընտրողների հետ: Տվյալների հավաքագրումը կատարվել է գրասենյակային հետազոտության, առցանց բաց տվյալների վերլուծության, անմիջական դիտարկումների, հանդիպումների, հարցազրույցների, ինչպես նաև՝ մամուլի լուսաբանումներին հետևելու միջոցով: Անուղղակիորեն ստացված տեղեկությունների ճշգրտությունն ու հավաստիությունն ապահովելու նպատակով՝ դրանք հնարավորինս ստուգվել են մի քանի անկախ աղբյուրների միջոցով:

Քվեարկության օրն «Ականատեսը» իրականացրել է շրջիկ դիտորդություն վերոնշյալ 10 համայնքի 216 տեղամասերում, ներգրավելով 44 շրջիկ դիտորդ:

«Ականատես» դիտորդական առաքելության կողմից նախընտրական ժամանակահատվածում և քվեարկության օրն իրականացված դիտարկման արդյունքները ներկայացվում են ստորև:

### *Նախընտրական ժամանակահատված*

#### *Ընտրական հանձնաժողովներ*

Հայաստանի Հանրապետությունում գործում է եռաստիճան ընտրական համակարգ՝ կենտրոնական, ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների տեսքով: ՏԻՄ ընտրությունների կազմակերպման գործում անչափ կարևոր է հատկապես երկրորդ մակարդակի՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (ԸԸՀ) պրոֆեսիոնալ և անխափան աշխատանքը, քանի որ վերջիններիս են վերապահված ընտրությունների կազմակերպման մի շարք կարևորագույն գործառույթներ:

Դիտարկված 10 համայնքները սպասարկող ԸԸՀ-ներում գրանցվել է թվով 11

կուսակցություն և 9 կուսակցությունների դաշինք<sup>1</sup>: Թեկնածուների կողմից գույքի և եկամուտների մասին հայտարարագրեր են ներկայացվել դիտարկված բոլոր ԸԸՀ-ներում:

Ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների ինքնաբացարկի առավել մեծ քանակով դեպքեր են գրանցվել Թալինում, որտեղ ինքնաբացարկի 23 դիմումներ են ներկայացվել գրանցված 5 կուսակցություններից 4-ից՝ բացառությամբ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության: Առաքելության գրուցակիցները նշել են, որ որոշ դեպքերում ինքնաբացարկի դիմումները եղել են ոչ ուղղակի ճնշումների և կաշկանդող այլ հանգամանքների հետևանք:

Տասնյակ ինքնաբացարկի դիմումներ են ստացվել տեղամասային ընտրական հանձնաժողովների (ՏԸՀ) նախագահներից, քարտուղարներից և անդամներից:

Ինքնաբացարկի հետևանքով առաջացած թափուր տեղերը մեծ մասամբ լրացվել են և չեն խոչընդոտել ՏԸՀ-ների բնականոն աշխատանքին:

Նախընտրական շրջանում ԸԸՀ-ներում ընտրական գործընթացի մասնակիցների կողմից գրավոր դիմում-բողոքներ չեն ստացվել, բացառությամբ մեկ դեպքի: Թիվ 28 ԸԸՀ-ին ներկայացվել է բողոք Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից չսահմանված վայրերում քարոզչանյութերի փակցման առիթով (բազմաբնակարան շենքերի պատեր, էլեկտրական ենթակայան, սյուներ): ԸԸՀ որոշման համաձայն կիրառվել նախազգուշացում՝ ժամանակ տալով կուսակցությանը վերացնել խախտումները:

Դիտարկումները ցույց են տվել, որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները գործել են համաձայն Ընտրական օրենսգրքի պահանջների և ընթացակարգերի: ԸԸՀ-ներում առկա չեն եղել ուղղակի կամ անուղղակի ճնշումներ, կաշկանդվածություն, միջամտություն կամ ԸԸՀ անկախությանը խոչընդոտող այլ

<sup>1</sup><https://res.elections.am/images/TIM/2022/nomination25.09.22.pdf?fbclid=IwAR2OSNv6NNtt6ZQMkkaZNYKtQc0nH2kGJhDIDXFMD2ZFeQqFJM3U6oOa-I>

հանգամանքներ: Թե՛ դիտորդները և թե՛ քաղաքական ուժերի ներկայացուցիչները հիմնականում գոհացուցիչ են գնահատել ԸԸՀ անդամների աշխատանքը:

Հարկ է նկատել, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջի<sup>2</sup> բարելավումը էականորեն ավելացրել է ԸԸՀ-ների աշխատանքի թափանցիկությունը, որի անհրաժեշտության մասին մեր կողմից բազմիցս բարձրաձայնվել է նախկինում: Կայքէջի թարմացման արդյունքում նախապես հրապարակվել են ԸԸՀ նիստերի օրակարգերը, որոշումները, վարչական վարույթների արդյունքները:

Դիտարկման գործընթացում դիտորդների աշխատանքի խոչընդոտման դեպքեր չեն արձանագրվել:

### *Նախընտրական քարոզարշավ*

Դիտարկվող համայնքներում ՏԻՄ ընտրություններն անց են կացվել համամասնական ընտրակարգով: Հարկ է նկատել, որ անհրաժեշտ են լրացուցիչ ջանքեր՝ ընտրողների և ընտրապայքարի մասնակիցների շրջանում համամասնական ընտրակարգի կիրառության նպատակի լիարժեք ընկալմանը հասնելու համար: Դիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ որոշ դեպքերում ընտրողները դժգոհում են թեկնածուների մեծ քանակից և տարակուսանք հայտնում այն առիթով, որ թեկնածուին տրված քվեի և ընտրությունների արդյունքում ձևավորվող համայնքային իշխանության միջև կապն անհստակ է: Այս առումով, ընտրողների շարունակական իրազեկման բաց է նկատվում:

Համամասնական ընտրակարգի մասին պատկերացումները ոչ ամբողջական են նաև ընտրապայքարի մասնակիցների շրջանում: Որպես ընդհանրական օրինակ կարելի է ներկայացնել Ալավերդի խոշորացված համայնքի Ախթալա բնակավայրի նախկին համայնքապետ, «Ապրելու երկիր» կուսակցության ընտրական ցուցակը գլխավորող

---


<sup>2</sup> [elections.am](http://elections.am)

թեկնածու Արկադի Թամազյանի՝ ընտրողներին ուղղված այն հավաստիացումը, թե «ինքն անկուսակցական է և չունի քաղաքական նպատակ, միակ նպատակը աշխատանքը շարունակելն է» (հատված ընտրողների հետ հանդիպումից): Ակնհայտորեն, ընտրապայքարի մասնակիցներն ավելի հաճախ անձնավորված քարոզարշավ են վարել, քան շեշտադրել կուսակցության գաղափարներն ու ծրագրերը:

Նախընտրական քարոզչության պաշտոնական ժամանակահատվածը տևել է օգոստոսի 31-ից սեպտեմբերի 23-ը: Մինչև սեպտեմբերի 13-ը նախընտրական միջոցառումները (հավաքներ, երթեր, բակային հանդիպումներ ընտրողների հետ) ընթացել են որոշակիորեն ակտիվ, մինևույն ժամանակ՝ կառուցողական մթնոլորտում: Սեպտեմբերի 13-ից, ՀՀ սահմանների նկատմամբ Ադրբեյջանի կողմից սանձազերծված ագրեսիայի հետևանքով քարոզչական ակտիվ գործողությունները համայնքներում մեծամասամբ դադարել են: Դրանք վերսկսվել են միայն քվեարկության օրվան նախորդող շաբաթվա ընթացքում և մեծամասամբ դրսևորվել համացանցում իրականացվող քարոզարշավի տեսքով: Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի միջև հանրային բանավեճեր գրեթե չեն կազմակերպվել:

Առաքելության դիտորդները հանդիպումներ են ունեցել քաղաքական ուժերի 39 ներկայացուցիչների հետ:

Պատասխան	Քանակ	Տոկոս	
 Թեկնածու	18	46%	
 Շտաբի համակարգող	12	31%	
 Կուսակցության ներկայացուցիչ	3	8%	
 Այլ (սշել)	6	15%	
<b>Ընդամենը</b>	<b>39</b>		



Ընտրապայքարի մասնակիցները և ընտրողները նախընտրական մթնոլորտը հիմնականում գնահատել են անխոչընդոտ և ոչ կոնֆլիկտային: Ի տարբերություն 2021թ. համապետական ընտրությունների՝ ատելության խոսքի կիրառում գրեթե չի նկատվել: Ֆիզիկական բռնության կամ դրա սպառնալիքի դեպքեր չեն արձանագրվել:

Նմանատիպ միջավայրը հատկանշական է համայնքային ընտրություններին, որտեղ միջանձնային և բարեկամական կապերն առավել կարևորվում են: Ինչպես դիտորդի հետ զրույցում նշել է թեկնածուներից մեկը՝ «ընտրությունները կանցնեն, իսկ մենք դեռ ապրելու ենք կողք կողքի»:

Ընդհանուր առմամբ, առաքելության կողմից դիտարկվել է թվով 34 քարոզչական միջոցառում տարբեր համայնքներում: Դրանց ընթացքում թեկնածուների կողմից հիմնականում ներկայացվել են համայնքներում առկա խնդիրները և դրանց լուծմանն ուղղված՝ քաղաքական ուժերի ծրագրերը: Դիտորդների հետ զրույցներում քաղաքական ուժերի ներկայացուցիչների մեծ մասը գրավոր նախընտրական ծրագիր են համարել տպագրված բուկլետներում առկա ինֆորմացիան:

Քարոզչության տեխնիկաներից ամենից կիրառելին են եղել բնակավայրերում ոչ մարդաշատ բացօթյա հանդիպումները ընտրողների հետ և օնլայն հարթակներում քարոզչությունը:

Դիտորդության ընթացքում ընտրակաշառքի բաժանման դեպքեր չեն նկատվել:

Արձանագրվել է առերևույթ արգելված բարեգործության երկու դեպք՝

1. սեպտեմբերի 1-ին Գիտելիքի օրվա առիթով Չարենցավան համայնքում ժամանցային միջոցառում է կազմակերպվել երեխաների համար, որի ընթացքում տեղադրված են եղել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակը գլխավորող թեկնածու Արթուր Գալստյանի քարոզչական պաստառը և բազմաթիվ այլ քարոզչանյութեր (ընդհուպ մինչև երեխաների խաղավարը կրել է թիվ 7 նշանով գլխարկ): Միջոցառման հաղորդավարները անընդմեջ բեմից կոչ են հնչեցրել քվեարկել Արթուր Գալստյանի օգտին:
2. Ախթալայի մանկապարտեզի բացման արարողության ավարտին «Ապրելու երկիր» կուսակցության ցուցակը գլխավորող թեկնածու Արկաղի Թամազյանը

պայուսակներ և գրենական պիտույքներ է նվիրել երեխաներին:

Արձանագրվել է ընտրական քարոզչության իրավունք չունեցող անձանց կողմից քարոզչություն իրականացնելու մեկ դեպք: Մասնավորապես՝ Տավուշի մարզի Բերդ համայնքում «Զորավոր համայնք» դաշինքի քարոզչական միջոցառմանը ներկա է եղել շրջանի հոգևոր հովիվ Տեր Արամ քահանան, ով ելույթ ունենալով միջոցառման ժամանակ, իր օրհնությունը և դաշինքին աջակցող խոսքեր է հղել:<sup>3</sup>

Ընտրապայքարում քրեական հեղինակությունների ներգրավման մեկ դեպք է գրանցվել Լոռու մարզի Տաշիր համայնքում: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակը գլխավորել է Արման Վարդանյանը<sup>4</sup>, ում հաճախ (այդ թվում քարոզարշավի ընթացքում) կարելի է տեսնել քրեական ենթամշակույթի հետ ասոցացվող անձանցով շրջապատված: Ըստ դիտորդական առաքելության տեղեկությունների՝ թեկնածուն ունեցել է դատվածություն աղմկահարույց գործով:

Մեկ դեպք է գրանցվել, երբ կուսակցությունների դաշինքը չի կարողացել քարոզչության նպատակով օգտվել անվճար հիմունքներով համայնքների կողմից տրամադրվող դահլիճներից: «Միասնական համայնք» կուսակցությունների դաշինքը դիմում է ներկայացրել Մեծավանի (Տաշիր) համայնքապետարան՝ մշակույթի տան դահլիճում քարոզչական միջոցառում անցկացնելու նպատակով: Դահլիճն, ի դեպ, ընդգրկված է եղել անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների ցանկում: Առաքելության հետ զրույցում համայնքապետարանի ներկայացուցիչը մերժումը հիմնավորել է դահլիճի ոչ բարվոք պայմաններով:

Քարոզչանյութերի տարծման տեսանկյունից չսահմանված/արգելված վայրերում քարոզչական նյութերի տեղադրումը շարունակել է կրել պարբերական բնույթ (առաքելության կողմից արձանագրվել է մի քանի հարյուր դեպք): Մասնավորապես՝

<sup>3</sup> [https://www.facebook.com/watch/live/?extid=CL-UNK-UNK-UNK-AN\\_GK0T-GK1C&ref=watch\\_permalink&v=744751266629156](https://www.facebook.com/watch/live/?extid=CL-UNK-UNK-UNK-AN_GK0T-GK1C&ref=watch_permalink&v=744751266629156) 13-րդ բույեից

<sup>4</sup> հայտնի է «Նազի» մականվամբ



պաստառները փակցված են եղել փողոցային սյուների, բազմաբնակարան շենքերի, սննդի և առևտրի օբյեկտների վրա: Նման խախտումներ թույլ են տրվել գրեթե բոլոր կուսակցությունների/կուսակցությունների դաշինքներից կողմից, գերակշռել են «Քաղաքացիական պայամանագիր» կուսակցության կողմից թույլ տրված դեպքերը: Հանրային տրանսպորտում քարոզչական պաստառների տեղադրման մեկ դեպք է գրանցվել: Լոռու մարզի Տաշիր-Միխայելովկա, Տաշիր-Նորաշեն-Սարչապետ միջհամայնքային երթուղին սպասարկող մեքենաների դրսում և ներսում փակցվել են «Քաղաքացիական պայամանագիր» կուսակցության քարոզչական պաստառներ: Երբ դիտորդն այս մասին տեղեկացրել է Լոռու մարզպետի տեղակալ Գոռ Ասրյանին, վերջինս խորհուրդ է տվել «չնկատել որոշ բաներ»:

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն, չսահմանված/արգելված վայրերում փակցված քարոզչանյութերի հեռացման պատասխանատուն համայնքի ղեկավարն է: Սակայն վերջիններս ոչ բոլոր դեպքերում են զբաղվել այս խնդրով, ինչի արդյունքում որոշ համայնքներում նկատվել է մեկ կուսակցության քարոզչանյութերի անհամամասնորեն մեծ քանակ: Հարկ է նշել, որ բազմաթիվ են եղել նաև քարոզչանյութերի վնասման դեպքերը:

Ընտրական օրենսգիրքը սահմանում է նաև, որ քարոզչական տպագիր նյութերը պետք է տեղեկություններ ներառեն պատվիրատուի, տպագրող կազմակերպության և տպաքանակի վերաբերյալ: Պահանջվող տվյալները բացակայել են օրինակ Չարենցավան համայնքում մրցակցող «Ապրելու երկիր» կուսակցության, «Միասնական համայնք» և «Արժանապատիվ սերունդ» կուսակցությունների դաշինքների քարոզչական գրեթե բոլոր տպագիր նյութերում:

Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների միջոցով, ՋԼՄ-ներով, այդ թվում՝ կաբելային (մալուխային) ցանցով, արբանյակային կապով և վերգետնյա եթերային հեռարձակմամբ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից,

ինչպես նաև համացանցում գովազդի միջոցով արգելվում է: «Լռության օրվա» կանոնի խախտում է արձանագրվել Հանրային հեռուստաընկերության կողմից, երբ ՏԻՄ ընտրություններին նախորդող օրը հեռարձակվել է Միսիան համայնքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակը գլխավորող թեկնածու Արմեն Հակոբջանյանի հարցազրույցը, որն ունեցել է նախընտրական քարոզչության հստակ տարրեր:

Չնայած արգելքին, «լռության օրվա» ընթացքում քարոզչություն է արձանագրվել նաև համացանցային տիրույթում: Այն հատկապես անվերահսկելի է եղել սոցիալական ցանցերում:

### *Վարչական ռեսուրսների կիրառում*

ՏԻՄ ընտրությունների ժամանակահատվածում դիտարկվել են վարչական լծակների միջոցով թեկնածուների ազատ կամքի արտահայտումը առերևույթ խոչընդոտելու մի քանի դրսևորումներ: Այսպես՝

- Աշխատանքից հեռացվել է Միսիանի համայնքապետարանի ենթակայության տակ գործող Արվեստի դպրոցի տնօրենը, ով «Աշխատանք և արդարություն» դաշինքի ընտրական ցուցակով առաջադրված թեկնածու է: Տնօրենի խոսքով՝ իր նկատմամբ պարբերաբար կիրառվել են ճնշումներ և ներկայացվել է պահանջ սատարելու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը:
- Ըստ տարբեր աղբյուրներից ստացված տեղեկությունների՝ ճնշումներ են կիրառվել Տաշիրում «Միասնական համայնք» դաշինքի թեկնածուների նկատմամբ: Այսպես, Նորաշեն և Կաթնառատ համայնքներում աշխատանքից ազատվել են 2 թեկնածուներ (դպրոցի ուսուցիչներ): Նմանատիպ իրավիճակում է հայտնվել Տաշիր ԲԿ-ի վիրաբույժը: Մեկ այլ դեպքում՝ Տաշիրի պոլիկլինիկայի ընտանեկան բժիշկը տնօրենի պահանջով ներկայացրել է

ինքնաբացարկի դիմում՝ աշխատանքից ազատման սպառնալիքի ներքո: Բոլոր դեպքերում ճնշումներն ուղղորդվել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից:

Ընտրություններում վարչական լծակների կիրառման ևս երկու դեպք է գրանցվել Լոռու մարզի Գյուլագարակ համայնքում՝

- Գարգառ բնակավայրի միջնակարգ դպրոցի տնօրենը դասի ժամին աշակերտին ներգրավել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչական պաստառի փակցման աշխատանքներում:
- Վարդաբլուր բնակավայրում մանկապարտեզի տնօրենը, ով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածուն է, քարոզչություն է իրականացրել ծնողական ժողովի ընթացքում:<sup>5</sup>

Առհասարակ, համայնքային ենթակայության գործող կառույցները թերևս ամենախոցելի են վարչական ճնշումների տեսանկյունից: Այս մասին են վկայում նմանատիպ կառույցների սոցիալական հարթակների էջերից հաճախակի կատարվող քարոզչության դեպքերը («Ալափարս գյուղի մանկապարտեզ»՝ «Միասնական համայնք» դաշինքի օգտին, Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին», Վարդաբլուրի մանկապարտեզ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին»):

Նախընտրական քարոզչության համատեքստում բազմաթիվ են եղել վարչական ռեսուրսների տիրապետման փաստի շահարկման միջոցով մրցակիցների հանդեպ առավելություն ստանալու փորձերը: Գործող համայնքապետ-թեկնածուների դեպքում պետական և համայնքային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի միջոցով փորձ է կատարվել ներկայացնել սուբվենցիոն ծրագրերի իրականացումը որպես լոկ իրենց պաշտոնավարման ձեռքբերում: Մինչդեռ կենտրոնական իշխանության կողմից առաջադրված հավակնորդ թեկնածուները ջանացել են տպավորություն ստեղծել, թե

<sup>5</sup> <https://www.facebook.com/photo/?fbid=2706930892774015&set=a.281505701983225>

պետական ֆինանսավորմամբ իրականացվող սուբվենցիոն տարբեր ծրագրերի շարունակականությունը կամ նոր ծրագրերի իրականացումը պայմանավորված է ընտրություններում իրենց գրանցվելիք հաջողությամբ: Որոշ դեպքեր ներկայացված են հղումներում: <sup>6 7 8 9 10 11 12</sup>

### *Քվեարկության օր*

Քվեարկության օրվա դիտարկումը շրջիկ դիտորդները սկսել են ընտրական տեղամասերի բացման պահից՝ առավոտյան 08:00-ից: Ընդհանուր առմամբ, քվեարկության օրվա ընթացքին հետևել է 22 շրջիկ խմբում ընդգրկված 44 դիտորդ: Դիտորդները օրվա ընթացքում այցելել են դիտարկվող 10 համայնքների 216 ընտրական տեղամասեր (յուրաքանչյուր տեղամասում գտնվելով կեսից մեկ ժամ): Դիտորդները հետևել են նաև կուսակցությունների և դաշինքների շտաբների ու գրասենյակների, տեղամասերին հարող տարածքների ընդհանուր միջավայրին և իրադարձություններին: Գիշերվա ընթացքում՝ հաշվարկի և ամփոփման փուլից հետո, դիտորդները հետևել են ընտրական փաստաթղթերն ու պարագաները ԸՀ-ներ ներկայացնելու գործընթացին:

Քվեարկության մասնակցության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Սյունիքի մարզի Քաջարան խոշորացված համայնքում՝ 78%, իսկ ամենացածր ցուցանիշը գրանցվել է Կոտայքի մարզի Ջրվեժ խոշորացված համայնքում՝ 27%: Միջինում մասնակցության ցուցանիշը քվեարկության օրվա ավարտին՝ 20:00-ի դրությամբ

<sup>6</sup><https://www.facebook.com/Azghamaynq/posts/pfbid02Urn6ufoiBtPk59EGN4mY3PjvkAPMuq4RTwEogLz9kT9zuPQW6CpSB31ZND92RoeI>

<sup>7</sup>[https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=pfbid024tRmuPPjqMctuStLrqAA5rki8o7Jvw4NSvMHWUpkiRjmDjWto3ahmwdFw5XJzNml&id=105061322322768](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid024tRmuPPjqMctuStLrqAA5rki8o7Jvw4NSvMHWUpkiRjmDjWto3ahmwdFw5XJzNml&id=105061322322768)

<sup>8</sup>[https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=pfbid0o5Aip4cjuEnenG3LsQzWCMA5KYpzAm2niyDqzYXPv8rYh89kMUtrVHokRuctWM2GI&id=101104126073146](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0o5Aip4cjuEnenG3LsQzWCMA5KYpzAm2niyDqzYXPv8rYh89kMUtrVHokRuctWM2GI&id=101104126073146)

<sup>9</sup>[https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=pfbid0mBQs6P7EtWNNXjvf9CzaDUZ9dEooeacxmRzrP9zRKtabR73bmG8aBhb8xqLLb2aRPI&id=101104126073146](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0mBQs6P7EtWNNXjvf9CzaDUZ9dEooeacxmRzrP9zRKtabR73bmG8aBhb8xqLLb2aRPI&id=101104126073146)

<sup>10</sup>[https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=pfbid0dgKTzx8F8JB8HBbcLhZb6tefshEcG55tVEXQCosdRvD8cv4KNfZfk9sGTKfqqxVhl&id=101104126073146](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0dgKTzx8F8JB8HBbcLhZb6tefshEcG55tVEXQCosdRvD8cv4KNfZfk9sGTKfqqxVhl&id=101104126073146)

<sup>11</sup>[https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=pfbid02hZVVsdCF8eBTaNN3uMAijNqHAG42LjLHhuePUMoj7aTZ7p92kDbusiPPTFtHz1NEI&id=101104126073146](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02hZVVsdCF8eBTaNN3uMAijNqHAG42LjLHhuePUMoj7aTZ7p92kDbusiPPTFtHz1NEI&id=101104126073146)

<sup>12</sup><https://www.facebook.com/aren.mkrtyan.5/posts/pfbid02aF1tSPYn9ktsLXwQ7RFRZNFo842V8VzQgaxrvKaH5Yj8QLfbjrvVBWwp5frFpsrl>

կազմել է՝ 50.47%:

Ընդհանուր առմամբ, քվեարկության օրն անցել է հանդարտ: Որոշ բնակավայրերում գրանցվել են խախտումներ և միջադեպեր, որոնք, սակայն չեն ազդել ընտրությունների ընդհանուր արդյունքների վրա:

Դիտարկված ընդհանրական խնդիրներից են՝

- 1. մարդկանց և մեքենաների կուտակումներ կուսակցությունների (դաշինքների) շտաբներին և ընտրական տեղամասերին հարող տարածքներում** – որոշ համայնքներում օրվա ընթացքում նկատվել է տարբեր կուսակցություններին հարող խմբերի ներկայություն: Որոշ դեպքերում նրանց գործողություններն ունեցել են ընտրողների ոչ բացահայտ ուղղորդման տարրեր:
- 2. ընտրական տեղամասեր դիտորդների մուտքի խոչընդոտում** – վերջերս կատարված ընտրական օրենսգրքի փոփոխությունների արդյունքում համատեղ դիտորդական առաքելություն իրականացնող տեղական կազմակերպությունները, ինչպիսին «Ականատեսն» է, ընտրական տեղամաս կարող են գործուղել երկուական դիտորդ՝ նախկին մեկի փոխարեն: Տեղամասային ընտրական հանձնաժողովները պատճառ կերպով տեղեկացված չեն եղել օրենքի փոփոխության մասին, ինչի հետևանքով քվեարկության ողջ օրվա ընթացքում պարբերաբար խոչընդոտվել է զույգ դիտորդների մուտքը տարբեր տեղամասեր:
- 3. ընտրական տեղամասերի կահավորման և մատչելիության խնդիրներ** – որոշ տեղամասերում գրանցվել են տեղամասերի սխալ դասավորության դեպքեր, բազմաթիվ տեղամասեր շարունակում են մնալ ոչ մատչելի հենաշարժողական և տեսողական խնդիրներ ունեցող ընտրողների համար:

Տեղամասային ընտրական հանձնաժողովները հիմնականում պատշաճ կերպով են կազմակերպել քվեարկության և հաշվարկի գործընթացը՝ հետևելով սահմանված ընթացակարգերին:

Ստորև առանձնացված են որոշ խնդրահարույց դեպքեր, որոնք արժանի են ուշադրության՝

- **Թիվ 25/29 տեղամասում (Լոռի, Նովոսելցովո գյուղ)** միաժամանակ ներկա են գտնվել երկու վստահված անձ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից (օրենքով սահմանված մեկի փոխարեն): Երկրորդ վստահված անձը դուրս է հրավիրվել տեղամասից միայն դիտորդների հորդորին հաջորդող տևական վիճաբանությունից հետո: Խախտումը գրանցվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում՝ դիտորդների նկատմամբ տեղամասային հանձնաժողովի նախագահի կողմից ճնշումների գործադրման պայմաններում:
- **35/1, 35/2, 35/3 և 35/5 տեղամասերում (Սյունիք, Քաջարան)** գրանցվել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածուների խմբի (5-6 անձ) կարճատև այցեր (ինչն օրենքով արգելված է): Տեղամասերին հարող տարածքներում նրանք գրուցել են ընտրողների հետ:
- **Թիվ 34/6 տեղամասի (Սյունիք, Մխիհան)** դիմաց վիճաբանություն է արձանագրվել: Մերի Տոմոյանը (բլոգեր) վիճաբանել է տեղամասային կենտրոնի մոտ կայանված՝ ծառայողական համարանիշներով մեքենայում գտնվող ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Կարեն Համբարձումյանի հետ՝ Համբարձումյանի կողմից ընտրողներին ենթադրաբար ուղղորդելու կապակցությամբ: Կարեն Համբարձումյանը հայհոյանքներ և վիրավորանքներ է հնչեցրել կնոջ հասցեին: Ոստիկանները դրսևորել են անգործություն և հարթել միջադեպը միայն դիտորդի հորդորից հետո: Պատգամավորն օրվա ընթացքում շարունակել է դրսևորել անպատշաճ վարքագիծ՝ փորձելով ազդեցություն գործադրել քվեարկության բնականոն ընթացքի վրա, բղավել է տեղամասային կենտրոնի պատուհանից ներս, հրահրել մի քանի վիճաբանություն:

- **Թիվ 25/25 տեղամասում (Լոռի, Լեռնահովիտ գյուղ)** հանձնաժողովի նախագահը որոշ ժամանակահատված (մոտ 5ր տնողությամբ) գրեթե յուրաքանչյուր քվեարկողից հետո մուտք է գործել քվեախցիկներ և դատարկել չօգտագործված քվեաթերթիկների արկղը՝ զննելով չօգտագործված քվեաթերթիկները:
- **Թիվ 35/6 տեղամասում (Սյունիք, Լեռնաձոր գյուղ)** ընտրողները քվեարկությունից առաջ մոտեցել են տեղամասից մոտ 100մ հեռավորության վրա գտնվող «Դեպի միասնություն» դաշինքի նախընտրական շտաբ (կես ժամվա ընթացքում արձանագրվել է շուրջ 6-7 դեպք):

Արձանագրված խնդիրների հիման վրա դիտորդների կողմից կազմվել են արձանագրություններ և կատարվել են գրառումներ տեղամասերի գրանցամատյաններում:

### ***«Ականատեսի» մասին***

«Ականատես» դիտորդական նախաձեռնությունը հիմնադրվել է 2018թ.՝ ընտրությունների նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնելու, Հայաստանում ընտրական գործընթացների կատարելագործումը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը և հրապարակայնությունը խթանելու նպատակով:

«Ականատես» նախաձեռնությունը գործում է անկախ՝ պահպանելով անկողմնակալության սկզբունքը և զերծ մնալով այնպիսի գործողություն կատարելուց, որը կարող է մեկնաբանվել որպես աջակցություն, քարոզչություն կամ հակաքարոզչություն ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության (դաշինքի), թեկնածուի օգտին կամ դեմ:

2022թ. սեպտեմբերի 25-ի ՏԻՄ ընտրությունների դիտարկումն իրականացվել է Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի աջակցությամբ:

Սույն տեղեկանքի բովանդակության համար պատասխանատու են «Ականատես» դիտորդական առաքելությունն ու դրա անդամ կազմակերպությունները, և այն չի արտացոլում դրամաշնորհատուների տեսակետները:

### **Անդամ կազմակերպություններ**



**Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը** հիմնադրվել է 2000թ., Երևանում: ԹԻՀԿ առաքելությունն է կոռուպցիան նվազեցնելու ու ժողովրդավարությունն ամրապնդելու ճանապարհով նպաստել լավ կառավարմանը Հայաստանում: Կազմակերպությունը դիտորդություն իրականացնում է 2008թ.-ից:

ք. Երևան, Սարյան 12 շենք, 5-րդ հարկ  
[www.transparency.am](http://www.transparency.am) +374 10569589

ԱՍՊԱՐԵԶ



**Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը** հիմնադրվել է 1999 թ., Գյումրիում: ԺԱԱ առաքելությունն է արտահայտման, մամուլի և տեղեկատվության ազատության պաշտպանությունը: Կազմակերպությունը դիտորդություն իրականացնում է 2009թ.-ից:

ք. Գյումրի Պուշկինի փող., 96 շենք  
[www.asparez.am](http://www.asparez.am) +374 31250622



**«Ռեստարտ»** գիտակրթական հիմնադրամը ստեղծվել է 2018թ., բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու նպատակով՝ ապահովելու ավելի հարմարավետ, կրթական առումով ավելի առաջադեմ բուհեր:

ք. Երևան, Մաշտոցի 45 Ա  
+374 99990321



**Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը** հիմնադրվել է 2018 թ., որի գործունեությունն ուղղված է ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանությանը և իրավական դաշտի բարեփոխումներին:

ք. Երևան, Վարդանանց փակուղի 8  
<https://ldpf.am/> + 374 99515600